ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՐԱՄԱՆ

15.05.2010թ. թիվ 83/1

Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների վերապատրաստման կարգը եւ պայմանները հաստատելու մասին

Հիմք ընդունելով Հյուսիսային համալսարանի կանոնադրության 7.14 կետը, Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով

հրամայում եմ

1.Հաստատել «Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների վերապատրաստման կարգը եւ պայմանները» (կցվում է).

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Բ.Մ.ՄԱԿԻՉՅԱՆ

ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հյուսիսային համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի (այսուհետ՝ դասավանդողներ) վերապատրաստման անցկացման կարգը և պայմանները:

2. Դասավանդողների վերապատրաստումը նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումն է, որը սույն կարգի համաձայն անցկացվում է դասընթացների (այսուհետ՝ հիմնական վերապատրաստում), փորձի փոխանակման, ինչպես նաև դասավանդվող առարկային վերաբերող քննարկումների կազմակերպման ձևերով:

3. Դասավանդողների վերապատրաստումն անցկացվում է ոչ շուտ, քան 3 եւ ոչ ուշ, քան 5 տարի հետո՝ դասավանդողի աշխատանքի նշանակվելու .եւ/կամ հերթական հիմնական վերապատրաստման մասնակցելու պահից: Դասավանդող-ների ատեստավորման արդյունքների հիման վրա, ինչպես նաև համալսարանի ռեկտորի որոշած այլ դեպքերում կարող է դասավանդողի վերապատրաստումն անցկացվել նաեւ այլ ժամկետներում:

4. Դասավանդողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են Հյուսիսային համալսարանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5. Հիմնական վերապատրաստումն անցկացվում է Հյուսիսային համալսարանի Լրացուցիչ կրթության կենտրոնում, իսկ փորձի փոխանակման կամ սեմինարների ձևով՝ նաև այլ ուսումնական հաստատություններում, շահագրգիռ այլ կազմակեր-պություններում, ինչպես նաեւ օտարերկրյա պետությունների առաջնակարգ բուհերում:

6. Հիմնական վերապատրաստման կազմակերպման, վերապատրաստման տարե-կան ուսումնական համալիր ծրագրերի, վերապատրաստման գործում առավել ար-դյունավետ միջոցների ներդրման աշխատանքներն իրականացնում է Հյուսիսային համալսարանի կադրային գործի վարման համար պատասխանատու ստորաբաժա-նումը՝ Հյուսիսային համալսարանի համապատասխան ամբիոնների հետ համատեղ:

7. Հյուսիսային համալսարանի կադրային գործի վարման համար պատասխանա-տու ստորաբաժանումը մինչեւ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը Հյուսիսային համալսարանի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում վերապատրաստման տա-րեկան ուսումնական համալիր ծրագրերը, դասավանդողների վերապատրաստման պլան-ժամանակացույցը:

8. Վերապատրաստումն անցկացվում է ամբիոնների կողմից նախապես ներկայացված դասավանդողների ցուցակի հիման վրա՝ մեկ տարվա համար:

9. Հիմնական վերապատրաստումն անցակցվում է մինչեւ 1 ամիս տեւողությամբ: Դասավանդողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձրացման փորձի փոխանակումը, քննարկումներն ու դասընթացները կազմակերպվում են մինչև 3 ամիս տեւողությամբ, նախապես համաձայնեցվելով դասավանդողների հետ:

10. Հիմնական վերապատրաստման ընթացքում դասավանդողների դրամական բավարարումը պահպանվում է, իսկ փորձի փոխանակման, սեմինարներին մասնակցության դեպքում դրամական բավարարումը կարող է պահպանվել Հյուսիսային համալսարանի ռեկտորի հրամանի հիման վրա:

11. Հիմնական վերապատրաստումն անցկացվում է ամբիոնների վարիչների, բնագավառի համապատասխան մասնագետների, փորձագետների, այդ թվում նաեւ այլ ուսումնական հաստատությունների դասավանդողների խմբի միջոցով, որի կազմը հաստատում է Հյուսիսային համալսարանի ռեկտորը:

12. Հիմնական վերապատրաստում անցած դասավանդողները վերապատրաստումն ավարտելուց հետո երեք ամսվա ընթացքում ենթակա են ատեստավորման: Այլ ձևով վերապատրաստում անցնելու դեպքում դասավանդողներին տրվում է համապատասխան վկայական (հավաստագիր):

13. Հիմնական վերապատրասման արդյունքում ատեստավորման կարգը, ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Հյուսիսային համալսարանի ռեկտորը: